Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Ա. Դ. Սախարովի անվան հ. 69 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Պատմություն» (22 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (30 դասաժամ), «Ռուսաց լեզու» (25 դասաժամ), «Մաթեմատիկա» (5 դասաժամ), «Տեխնոլոգիա» (19 դասաժամ), դասվար ռուսերենով ուսուցմամբ դասարանների (21 դասաժամ), դասվար (17 դասաժամ), «Ֆիզիկա» (8 դասաժամ), «Անգլերեն» (8 դասաժամ), «Հայոց եկեղեցու պատմություն» (4 դասաժամ), «Իմ հայրենիքը» (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստվորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբեյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները, ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. սեպտեմբերի 22-ին ՝ ժամը 14:00-ին, ՀՀ Երևանի Ա. Դ. Սախարովի անվան հ. 69 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Արարատյան 26:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 46-20-31 հեռախոսահամարով: